ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի Կառավարման խորհրդի 2006 թվականի օգոստոսի 3-ին և 5-ին կայացած նիստերի

Օգոստոս 3, 2006թ.

Նիստը նախագահում էր «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Ա.Մարգարյանը

Մասնակցում էին.

Ա. Մարգարյան	Հայաստանի Հանրապետության վարչապետ, խորհրդի նախագահ,
Վ. Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար,
Դ. Լոքյան	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար,
Վ. Տերտերյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Հ. Բեգլարյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի առաջին տեղակալ,
Տ. Ղազարյան	Շենիկ՝ ՋՕԸ,
Ն. Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ
Վ. Սողոմոնյան	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ
Վ. Համբարձումյան	Գյուղատնտեսական Ասոցիացիաների ֆեդերացիա իրավաբանական անձանց միություն
Կ. Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ

Նիստին մասնակցում էին նաև.

Դավիթ Ավետիսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ,

Ալեքս Ռասինը Կառավարման խորհրդում որպես դիտորդ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի Հայաստանյան ծրագրի ղեկավար,

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության գրանցման և գործունեությունը սկսելու համար՝
    - ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի նշանակում,
    - ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի լիազորումը ՊՈԱԿ-ը գրանցելու,
    - ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագրի կնքում:
2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի բանկի ընտրության մրցույթի առաջարկ ներկայացնելու հրավերի և որակավորված բանկերի ցանկի հաստատում:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավար (Գնումների գծով ղեկավար, Ոռոգման բաղադրիչի ղեկավար, Ջրից դեպի շուկա բաղադրիչի ղեկավար, Մոնիտորինգի և գնահատման գծով ղեկավար, **Գյուղական ճանապարհների ենթածրագրերերի ղեկավար,** Բնապահպանության և սոցիալական ազդեցության գծով ղեկավար) անձնակազմի ընտրություն:
4. «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի», ՀՀ Կառավարության անունից ՀՀ Կառավարության աշխատակազմի և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կառավարման և «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի», ՀՀ Կառավարության անունից ՀՀ Ֆինանսների և էկանոմիկայի նախարարության և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության միջև հատկացումների համաձայնագրերին հավանություն տալ:

Օրակարգի առաջին և երրորդ հարցերի վերաբերյալ.

Օրակարգի առաջին և երրորդ հարցերի քննարկումը որոշվեց հետաձգել ս/թ օգոստոսի 5-ին, շաբաթ օրը, ժամը 11:00, և միաժամանակ որոշվեց օրակարգում նշված «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) ղեկավար անձնակազմի առավելագույն միավորներ

հավաքած երեքական թեկնածուներին հրավիրել հարցազրույցի ս/թ օգոստոսի 5-ին, շաբաթ օրը, ժամը 11:00-ին:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի բանկի ընրության մրցույթի առաջարկ ներկայացնելու հրավերի և որակավորված բանկերի ցանկը (հավելված 1) : Հարցի շուրջ մտքերի փոխանակումից և շահագրգիռ քննարկումից հետո Կառավարման Խորհուրդը միաձայն ընդունեց հետևյալ որոշումը.

Որոշվեց՝

Հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի բանկի ընրության մրցույթի առաջարկ ներկայացնելու հրավերը և որակավորված բանկերի ցանկը:

Օգոստոս 5, 2006թ.

Նիստը նախագահում էր «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Ա.Մարգարյանը

Մասնակցում էին.

Ա. Մարգարյան	Հայաստանի Հանրապետության վարչապետ, խորհրդի նախագահ,
Վ. Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար,
Վ. Տերտերյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի տեղակալ
Տ. Պետրոսյան	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ,
Հ. Բեգլարյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարի առաջին տեղակալ,
Տ. Ղազարյան	Շենիկ՝ ՋՕԸ,
Ն. Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ
Վ. Սողոմոնյան	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ
Վ. Համբարձումյան	Գյուղատնտեսական Ասոցիացիաների ֆեդերացիա իրավաբանական անձանց միություն

Կ. Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ

Նիստին մասնակցում էին նաև.

Դավիթ Ավետիսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ,
Ալեքս Ռասինը	Կառավարման խորհրդում որպես դիտորդ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի Հայաստանյան ծրագրի ղեկավար,

Օրակարգի «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության գրանցման և գործունեությունը սկսելու համար՝ ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի նշանակում, ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի լիազորումը ՊՈԱԿ-ը գրանցելու, ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի հետ աշխատանքային պայմանագրի կնքում հարցերի վերաբերյալ.

Կառավարման Խորհրդում քննարկվեցին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի ընտրության նպատակով դիմած երեք թեկնածուների թեկնածությունները: Այնուհետև գլխավոր գործադիր տնօրենի ընտրության նպատակով, ս/թ հուլիսի 12-ին կայացած նիստի ընթացքում «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի ընտրության նպատակով նախարարակավորված՝ հինգ թեկնածուներից կազմված կարճ ցուցակից առաջին երեք առավելագույն ձայներ հավաքաց թեկնածուները ըստ ներքոհիշյալ հերթականության հրավիրեցին հարցազրույցի.

- Միսակ Ղարագյոզյան,
- Սերգեյ Մելոյանը (բացակայում էր),
- Արա Հովսեփյան:

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի Կառավարման Խորհրդի անդամները տվեցին հարցեր աշխատանքային փորձի, կենսագրության, կրթության, ընդհանուր փորձառության, պաշտոնին առնչվող հատուկ փորձառության և պաշտոնին առնչվող հատուկ գիտելիքների վերաբերյալ:

Հարցազրույցն ավարտելուց հետո, Կառավարման Խորհրդի նախագահ՝ ՀՀ Վարչապետ Ա.Մարգարյանը առաջարկեց քվեարկությամբ որոշում կայացնել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի վերաբերյալ:

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի Կառավարման Խորհրդը որոշեց՝

1. **Արա Հովսեփյանին նշանակել որպես «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն**

   Անձնագրային տվյալներ՝ (ՀՀ քաղաքացի, բնակվող՝ ՀՀ ք. Երևան, Փարփեցի փ. 9ա, բն. 10, անձնագիր թիվ. AF0646881, տրված 2002թ. դեկտեմբերի 11-ին, 001-ի կողմից):

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի Կառավարման Խորհրդը որոշեց նաև՝

2. **Լիազորել ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանին կատարել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ՊՈԱԿ-ի պետական գրանցման, ՊՈԱԿ-ի անձնակազմի հավաքագրման, գրասենյակի հիմնման համար, բացել ժամանակավոր բանկային հաշիվ՝ գրասենյակի սկզբնական ծախսերի համար, և կատարել այն բոլոր ծախսերը, որոնք անհրաժեշտ կլինեն ՊՈԱԿ-ի գրանցման և գրասենյակի հիմնման համար:**
3. **Հավանություն տալ ներկայացված աշխատանքային պայմանագրին և լիազորել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մանուկ Թոփուզյանին ստորագրել աշխատանքային պայմանագիր ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի հետ:**

Օրակարգի «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավար (Գնումների գծով ղեկավար, Ոռոգման բաղադրիչի ղեկավար, Ջրից դեպի շուկա բաղադրիչի ղեկավար, Մոնիտորինգի և գնահատման գծով ղեկավար, Գյուղական ճանապարհների ենթածրագրերերի ղեկավար, Բնապահպանության և սոցիալական ազդեցության գծով ղեկավար) անձնակազմի ընտրություն հարցի վերաբերյալ.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի ղեկավար անձնակազմի թափուր տեղերի համար կայացած մրցույթի, ըստ առավելագույն հավաքած միավորների արդյունքի՝

- Գնումների գծով ղեկավար – Ալեքսանդր Բախտամյան,
  Արմեն Ակլյան,
  Արթուր Սարգսյան:
- Ոռոգման բաղադրիչի ղեկավար – Տիգրան Քալանթարյան,
  Վարդգես Քուրքչիյան,
  Գարթ Ստյուարդ:
- Ջրից դեպի շուկա բաղադրիչի ղեկավար - Անահիտ Պետրոսյան,
  Արմենուհի Սահակյան,
  Գևորգ Գաբրիելյան:
- Բնապահպանության և սոցիալական ազդեցության գծով ղեկավար –
  Արմինե Սիմոնյան,
  Լուսինե Թասլակյան,
  Սամվել Վալոյան:
- Մոնիտորինգի և գնահատման գծով ղեկավար - Էսթեր Հակոբյան,
  Ռազմիկ Օհանյան,
  Բարիս Մկրտչյան,
  Արա Քառյան:
- Գյուղական ճանապարհների ենթածրագրերերի ղեկավար –
  Հակոբ Պետրոսյան,
  Աշոտ Կարախանյան,
  Սիմոն Մելիքյան:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում, ներկայացված տեղեկատվության քննարկում և հետաքրքրող թեկնածուներին ուղղվեցին հարցեր: Նաև որոշ պարզաբանումների համար Կառավարման Խորհրդի անդամները հարցեր ուղղեցին «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի» ներկայացուցիչ Ալեքս Ռասինին:

Ամփոփելով քննարկումները և հարցազրույցի արդյունքները Կառավարման Խորհուրդը որոշեց հավանություն տալ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի համապատասխան ղեկավար պաշտոնների համար հետևյալ անձանց նշանակման՝

- **Գնումների գծով ղեկավար – Ալեքսանդր Բախտամյան,**
- **Ոռոգման բաղադրիչի ղեկավար – Տիգրան Քալանթարյան,**
- **Ջրից դեպի շուկա բաղադրիչի ղեկավար - Անահիտ Պետրոսյան,**
- **Բնապահպանության և սոցիալական ազդեցության գծով ղեկավար - Արմինե Սիմոնյան**
- **Մոնիտորինգի և գնահատման գծով ղեկավար - Էսթեր Հակոբյան,**
- **Գյուղական ճանապարհների ենթածրագրերերի ղեկավար – Հակոբ Պետրոսյան:**

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի Կառավարման Խորհրդը հանձնարարեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ Դավիթ Ավետիսյանին և նորանշանակ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանին ձեռնարկել համապասխան միջոցներ ղեկավար անձնակազմի նշանակումը ապահովելու և գրասենյակի աշխատանքները կարգավորելու համար:

Օրակարգի՝ « **«Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի», ՀՀ Կառավարության անունից ՀՀ Կառավարության աշխատակազմի և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կառավարման և «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի», ՀՀ Կառավարության անունից ՀՀ Ֆինանսների և էկանոմիկայի նախարարության և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության միջև հատկացումների համաձայնագրերին հավանություն տալ»** ***հարցի վերաբերյալ.***

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի աշխատանքային խմբի ղեկավար և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի», ՀՀ Կառավարության

անունից ՀՀ Կառավարության աշխատակազմի և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կառավարման և «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի», ՀՀ Կառավարության անունից ՀՀ Ֆինանսների և էկանոմիկայի նախարարության և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման պետական ոչ առևտրային կազմակերպության միջև հատկացումների համաձայնագրերին հարցի շուրջ մտքերի փոխանակումից և շահագրգիռ քննարկումից հետո Կառավարման Խորհուրդը միաձայն ընդունեց հետևյալ որոշումը.

Որոշվեց՝

Հավանություն տալ «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի», ՀՀ Կառավարության անունից ՀՀ Կառավարության աշխատակազմի և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի միջև կառավարման և «Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի», ՀՀ Կառավարության անունից ՀՀ Ֆինանսների և էկանոմիկայի նախարարության և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի կառավարման ՊՈԱԿ-ի միջև հատկացումների համաձայնագրերին:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ